ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

<<ՇՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/12>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Գյումրի <<21>> մարտ 2017թ.

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սողոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Պետրոսյանը, Վ. Բեկզատյանը, Վ. Մուրադյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ղանդիլյանը

1. Շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ս. Սողոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսահամարը
1.	<<Քամ են Գո>> ՍՊԸ	Ք.Երևան,Ավան Դուրյան թաղ.47շ.48բն. հեռ 095091750
2.	<<Մարինե-90>> ՍՊԸ	Ք.Երևան, Բարձրաբերդի 47

1.2 Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

<<Քամ են Գո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

<< Մարինե-90>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան:

1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

<<ՇՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/12>> ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման հրավերով սահմանված <<Քամ են Գո>> ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել է դիմում շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների

մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնի առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և երկու օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված և բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

<<Քամ են Գո>> ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հայտի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.5 Մասնակցի կողմից առաջարկված գինը ներկայացված է ստորև.

(ՀՀ դրամ)

N	Մասնակցի անվանումը	Գնման աշխատանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված ընդհանուր գինը (թվերով և տառերով
1.	<<Քամ են Գո>> ՍՊԸ	Ճաշարանում օգտագործվող սարքեր	13250000	0	2650000	15900000 Տասնհինգ միլիոն ինը հարյուր հազար

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Քամ են Գո>> ՍՊԸ-ին:

2.2 Ուղարկել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Քամ են Գո>> ՍՊԸ-ի մասով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

2.3 Ուղարկել ծանուցում <<Քամ են Գո>> ՍՊԸ-ին՝ 1 չափաբաժնի մասով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ առաջարկվող աշխատանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը ներկայացնելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Նախագահ՝ _____ Ս. Սողոյան

Անդամներ՝ _____ Գ. Պետրոսյան

_____ Վ. Բեկզատյան

_____ Վ. Մուրադյան

Քարտուղար՝ _____ Ա. Ղանդիլյան